ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (2017-2021 ԹԹ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 117-Ն որոշմամբ վերանայվեց համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ): 2020 թվականի ՀՀԶԾ-ի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվել է համայնքի ղեկավարին կից գործող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի և համայնքի աշխատակազմի կողմից իրականացված ոլորտային ծրագրերի մոնիթորինգի արդյունքում:

Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը ապահովելու, ինչպես նաև կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գյումրի համայնքի հնգամյա զարգացման 2020 թվականի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին ներգրավվել են ավագանու անդամներ և շահագրգիռ այլ անձինք:

2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոնիթորինգի նպատակը ոլորտային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները, որակը և ծավալները, դրանց տեխնիկական առաջադրանքների ու նախահաշիվների պահանջներին համապատասխան իրականացնելն է և ընթացքում բացահայտված շեղումները վերացնելը կամ, ավելի բարդ դեպքերում՝ ծրագրային փաստաթղթերը վերանայելու և դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ ՏԻՄ-երին առաջարկություններ ներկայացնելը:

Մոնիթորինգը և գնահատումն իրականացվել է ՀՀԶԾ-ի ֆինանսավորման պլանով և մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց փաստացի արժեքները հաշվարկելու, ելակետային ու թիրախային արժեքների հետ դրանք համեմատելու միջոցով (հավելվածներ 1-2): Ցուցանիշների արժեքների շեղումները կամ դրանց պատճառները մեկնաբանված են Հավելված 2-ի «Ցուցանիշի շեղման մեկնաբանություն» սյունակում:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը է ներկայացվելու 2021 թվականին «Համայնքի տարեկան աշխատանքային պլան»-ը (ՏԱՊ):

Տարեկան պլանավորումը հնարավորություն կտա ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, սփյուռք, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, միջհամայնքային ծրագրեր և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները: Տարեկան աշխատանքային պլանի միջոցով կհստակեցվեն հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված տարեկան կտրվածքով անելիքները, ծրագրերը և միջոցառումները, որոնք բխում են երկարաժամկետ ռազմավարական նպատակներից: Այն կնպաստի ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարության հստակեցմանը՝ նախանշելով այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համայնքում լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ համագործակցելով պետական, միջազգային, հանրային և մասնավոր գործընկերների հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

Հավելված 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐ	2020 ՆԱԽԱՏԵՍՎԱԾ (ՀԱՀ. ԴՐԱՄ)	ՈՐԻՑ		2020 ՓԱՍՏԱՑԻ (ՀԱՀ. ԴՐԱՄ)	ՈՐԻՑ	
		ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ		ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2. Համայնքի գույքի կառավարում	156669.8	156669.8	0.0	129827.0	129827.0	0.0
3. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն	1734101.2	49559.9	1684541.3	1586803.9	50717.6	1536086.3
4. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	392720.0	59000.0	333720.0	463277.5	95426.0	367851.5
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	127085.6	60454.1	66631.5	163635.6	97004.1	66631.5
6. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	2437598.5	112598.5	2325000.0	143267.5	121417.5	21850.0
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանում	190000.0	20000.0	170000.0	0.0	0.0	0.0
8. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովվում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովվում	1266389.4	892160.2	374229.2	888626.5	496472.5	392154.0

9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	9915679.7	640679.7	9275000.0	3968520.8	1328520.8	2640000.0
10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	1100.0	1100.0	0.0	12100.0	1210.0	0.0
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակ-չության պաշտպանության ու քաղաքա-ցիական պաշտպանության միջոցառում-ների կազմակերպում և իրականացում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
12. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
13. Շրջակա միջավայրի պահպանություն	98020.1	42119.0	55901.1	89083.1	36682.0	52401.1
14. Համայնքնում զբոսաշրջության զարգացման խթանում	122290.0	122290.0	0.0	15340.0	15340.0	0.0
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	40311.8	40311.8	0.0	50316.8	50316.8	0.0
16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավ-ման ծրագրերի իրականացում, արդյունա-վետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
18. Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում	240.0	240.0	0.0	240.0	240.0	0.0
19. Բարեգործության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀՀԶԾ-ՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԲԱՂԱԴՐԻՉ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՐԺԵՔ (2020)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓԱՍՏԱՑԻ ԱՐԺԵՔ (2020)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓԱՍՏԱՑԻ ՇԵՂՈՒՄ (2020)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԵՂՄԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	44.2	-	-	*ՀՀ վիճակագրական կոմիտեի Շիրակի մարզային վարչությունից տվյալներ դեռևս չեն տրամադրվել*
Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	4.57	0.14	-4.43	*Covid-19 համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված*
Համայնքի գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	0.3	-	-	*ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից տվյալներ դեռևս չեն տրամադրվել*
ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Համայնքում առևտրի և սպասարկման ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը (անհատ ձեռնարկատերեր և ձեռնարկություններ)	684	630	-54	*Պայմանավորված է Covid-19-ի հետևանքով համայնքում անհատ ձեռնարկատերերի ու ձեռնարկությունների փակվելով*
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	42	40	-2	*Covid-19-ով պայմանավորված երեխաների ընդունելության սահմանափակում*
Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից	լավ	բավարար		*Covid-19-ով պայմանավորված մանկապարտեզների գործունեության դադարեցում, ընդունելության սահմանափակում*

Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	15.019	15.019	0	
Ծնողների բավարարվածությունը արտա-դպրոցական կրթությունից	լավ	լավ		
Մանկապարտեզների շենքերի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում (ֆինանսա-վորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	7500	1582	-5918	Covid-19–ով պայմանավորված մանկապարտեզների գործունեության դադարեցում
Մանկապարտեզներում ծնողական վարձա-վճարների զեղչերից օգտվող երեխաների թվի հարաբերությունը մանկապարտեզ հաճախող երեխաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	5	14	+9	Մանկապարտեզ հաճախում են սահմանափակ թվով երեխաներ, որոնցից զեղչերից օգտվող երեխաների թիվը մեծ է:
ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ	62	7	-55	Համավարակով պայմանավորված արգելքներ, պատերազմական իրադրություն
Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ	22	22	0	
Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների, ու պատանիների թվի հարա-բերությունը համայնքի երեխաների ու պատա-նիների թվին՝ արտահայտված տոկոսով	13.019	13.019	0	
Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից	լավ	լավ		
Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայքից դուրս մշակութային օջախներ	8	0	8	Covid-19 համավարակով պայմանավորված արգելքներ
Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն	7	6	-1	Կապված է գրադարանի փակվելու հետ
«Կումայրի» արգելոց-թանգարանի տեղեկատվական համակարգի ստեղծում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	20	20	0	
Մշակութային ֆոնդերի հավաքագրում և կատալոգների տպագրում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	25	90	+65	Հավաքագրվել են ֆոնդերը, կատարվել են նյութերի մշակում և վերականգնում
Համերգների, փառատոնների կազմակերպում (համայնքապետարանի կողմից կազմակերպված միջոցառումների թիվ)	4	2	-2	Covid-19 համավարակով պայմանավորված սահմանափակումներ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ				
Անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության իրականացում (աջակցություն ստացող ընտանիքների թիվ)	2960	1522	-1438	Փաստացի դիմումների և հանձնաժողովների իրականացրած աշխատանքների արդյունքում
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ				
Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ	368	346	-22	Covid-19 համավարակով պայմանավորված
Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ	146	56	-90	Covid-19 համավարակով պայմանավորված
Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	12	6	-6	Covid-19 համավարակով պայմանավորված
Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից	բավարար	բավարար		
«Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատա-նեկան մարզադպրոց» և «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների շենքերի վերանորոգում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1790	1000	-790	Աշխատանքներ իրականացվել են միայն «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ–ում
«Աթլետիկայի մանկապատանեկան մարզադըպրոց», «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ,«Պարի և սպորտային պարերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Յուրի Վարդանյանի անվ. ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների գործունեության ապահովում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	6500	30000	+23500	«Յուրի Վարդանյանի անվ. ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց»–ում իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ
«Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատանքների բարելավում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1000	1000	0	
«Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների ջեռուցման և ջերմամեկուսացման համակարգերի ստեղծում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1900	1300	-600	Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով

«Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապա-տանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզա-դահլիճի վերանորոգում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1400	1000	-400	Կատարվել է միայն տարածքի ցանկապատում
«Բոնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզաբազաների վերանորոգում, գույքի ձեռքբերում (ֆինանսա-վորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	900	200	-700	Ֆինանսական միջոցների նվազեցում Covid-19 համավարակով պայմանավորված
«Մարմանամարզական մարզաձևերի մանկա-պատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում (ֆինան-սավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	3000	1980	-1020	Ֆինանսական միջոցների նվազեցում Covid-19 համավարակով պայմանավորված
«Շախմատի մանկապատանեկան» և «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատա-նեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների շենքերի մասնակի նորոգում մարզագույքի ձեռքբերում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1940	250	-1690	Ֆինանսական միջոցների նվազեցում Covid-19 համավարակով պայմանավորված
«Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզաբազայի նորոգում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	12000	600	-11400	Ֆինանսական միջոցների նվազեցում Covid-19 համավարակով պայմանավորված
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Սոցիալապես անապահով ընտանիքների համար բնակարանների շինարարություն (կառուցված բնակարանների թիվ)	12	0	-12	Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ				
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	առկա	առկա		
Գյումրու հին թատրոնի շենքի վերանորոգում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	20	20	0	
Պատմամշակութային հուշարձանների վերականգնում (վերականգնված հուշարձանների թիվը)	10	5	-5	Ներդրողների պասիվություն
Ստորգետնյա անցումների վերակառուցում (վերականգնվող անցումների թիվը)	1	0	-1	Ներդրողների պասիվություն
Հասարակական զուգարանների կառուցում (կառուցվող զուգարանների թիվը)	1	0	-1	Ներդրողների պասիվություն

Բարվոք վիճակում գտնվող բազմբնակարանային շենքերի հարաբերությունը համայնքի բազմաբնակարանային շենքերի ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	20	20	0	
Համայնքի բարեկարգ բակերի թվի հարաբերությունը բակերի ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	32	32	0	
Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների՝ ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը՝ արտահայտված տոկոսով	1.1	2.7	+1.6	Պայմանավորված է հնգամյա զարգացման ծրագրով չնախատեսված փողոցաշինական աշխատանքներով
Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	100	100	0	
Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն	առկա	առկա		
Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	64	64	0	
Համատիրությունների կողմից սպասարկվող բազմաբնակարան շենքերի բնակ. մակերեսի հարաբերությունը համայնքում առկա բազմաբնակարան շենքերի բնակ. մակերեսին՝ արտահայտված տոկոսով	99.1	99.1	0	
Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին՝ արտահայտված տոկոսով	95	95	0	
Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբե-րությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին՝ արտահայտված տոկոսով	4.0	4.0	0	
Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից	լավ	գերազանց		

Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	1.1	0	-1.1	Համապատասխան տարածքների բացակայության պատճառով
Գերեզմանատների ընդլայնում (հատկացվող հողամասերի մակերես՝ արահայտված հեկտարով)	9	0	-9	Համապատասխան տարածքների բացակայության պատճառով
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ				
Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից	լավ	լավ		
Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին՝ արտահայտված տոկոսով	35	38	+3	Կատարված փողոցաշինական աշխատանքներով պայմանավորված նախատեսվածից ավել ճանապարհային նշաններ են տեղադրվել
Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսներով	92.8	92.8	0	
Համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	57.5	57.5	0	
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
Ռազմական գործողությունների մասնակիցներին և նրանց ընտանիքներին աջակցության ցուցաբերում (հազար դրամ)	19500	13944	-5556	Փաստացի դիմումներ և հանձնաժողովների իրականացրած աշխատանքների արդյունքում
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ	19	0	-19	Covid-19 համավարակով պայմանավորված
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ինտեգրվելուն միտված ծրագրերի իրականացում (միջոցառումների թիվ)	3	0	-3	Covid-19 համավարակով պայմանավորված
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ				
Համայնքապետարանի հետ համատեղ բարեգործական ծրագրերի իրագործում (միջոցառումների թիվ)	11	3	-8	Covid-19 համավարակով պայմանավորված